նէին աւելի քան զամս 100, յորս բացայայտ գրեալ էին թէ՝ վանք Ս. Յակոբայ է սեփհական ժառանգութիւն ազգին Հայոց, և նոքա տիրեալ են նմա ըստ տրամադրութեան մուրհակաց եւ հրովարտակաց։ Եհարց նախարարն ցգեսպանն եւ ցժողովեալսն Վրաց, ունի՞ք և դուք դիրս ինչ 'ի վկայութիւն վանացս՝ թէ լեալ իցէ սեփհական ազգին Վրաց. և նոքա ոչ կարացին մատուցանել թուղթս ինչ վասն այնր։ Ապա ելեալ 'ի վանաց Ս. Յակոբայ դնացին բազմութեամբ 'ի տաճարն Ս. Յարութեան, եւ ելին յաստիճանացն 'ի վեր 'ի Գողգոթայ, չինեալ յերկուց քարուկիր ձեղունց ձգեալ յարեւելից յարեւմուտս, առանց անջրպետ որմոյ՝ և 'ի միջավայրի մոյթ մեծ և հաստատուն չինեալ 'ի քարանց, մին 'ի ձեղունցն է 'ի կողմն հարաւոյ, և միւսն 'ի հիւսիսոյ, և յերկաքանչիւրսն կանգնեալ սեղան յարեւելս, ըստ սովորութեան եկեղեցեաց քրիստոնէից, ձեղունն հարաւային՝ է 'ի ձեռս Լատինաց, իսկ հիւսիսայինն 'ի ձեռս ազգին Վրաց, 'ի վերայ այսոցիկ տեղեաց էր հակառակութիւնն 'ի մէջ երկուց ազգաց։ Եհարց նախարարն ցժողովեալսն Վրաց, ունի՞ք թուղթս ինչ 'ի վկայութիւն սեփհականութեան տեղեացս. և նոքա մատուցին զհրովարտակն Մէլիք Աշրաֆայ, գրեալ առ թագաւորն Վրաց, իմաստն էր, «Եկն նամակ 'ի թագաւորէն Վրաց, և խնդրէր բնակեցուցանել զազգն իւր յերուսաղէմ յեկեղեցին Ս. Յարութեան, և մերժել անտի զազգն Հայոց և զայլ քրիստոնեայս։ Իսկ Մէլիք Աշրաֆ կատարեաց զխնդիր նորա եւ դարձոյց զեկեղեցին զայն ազգին Վրաց, եւ կարձեաց զձեռս Հայոց եւ այլ քրիստոնէից 'ի տեղւոջէն յայնմանէ. եւ համեմատ այսմ գրեաց նա եւ առ դատաւորն Երուսաղէմի, 'ի ١٣ Շէվվալ ամսոյ՝ ٨٣٦, (1432)։ Մատուցին զհրովարտակն Երկրորդ, Գրեալ 'ի Մէլիք Զահր Զագմագէ, առ թագաւորն Վրաց, այսու իմաստիւ, եկն թուղթ 'ի թագաւորէն Վրաց, յորում խնդրէր 'ի գթութենէ մերմէ սիրով խնամել զազգն իւր եւ զեկեղեցականս, որք բնակին յերկրին Իսլամաց, և դրեցի զհրովարտակս 'ի շնորհս քրիստոնէից 'ի ժամանակի յայսմիկ, յորում նստէին 'ի բարձրագոյն դուռն մեր։ Սակայն քրիստոնեայք՝ Վիրք և եկեղեցականքն, արարին որ ինչ ար-